11 *Կողէս, Ագրակին Վաճկինու ձորն, Բորդք ջաղ(ա)ցն, ձիթի ճանք,*
12 *սկի, շորջառ, Բ գեղ չին(ա)կան՝ Սանահնու սբ Ածածնիս։ Ով խափանէ՝*
13 *իմ մեղացս տր է։*

Ծանոթություն.— *1. 4-րդ տողի* զՏաւաւերու *տեղանվան մեջ առաջին* ա *գրի վրա կարող է լինել* Ն *կամ* Մ *գրի վերին եւուստ, բայց այդտեղ քարը փշրված է և չի կարդացվում։ Այդ անունը կարող է կարդացվել նաև* Տանաւեր *կամ* տամաւեր:

2. Իր *դերանունը* իւր *չդարձրինք, որովհետև մի քանի անգամ* իր *ձևով է կրկնված, մի տեղ էլ* ուր *ձևով, որ հավանաբար դարձյալ բարբառի ազդեցությամբ է առաջացել։*

3. էգի, Իգի այգի *բառի ձևերից երկուսն էլ հավանաբար եղել են բարբառում, բայց* Իգին *անպատճառ վերջում* Ն *ունի իբրև որոշիչ հոդ։*

4. Բարդ բառերի մեջ, երբ առաջին բառը վերջանում է ա *ձայնավորով, նրանից հետո արտասանվել է* յ, ամենայկալ, աւրայվար, Բրդայձոր, Քարայտակ, *բայց այդպես չեն* Ուռաբերդ, ձիթաճանք *բառերը, որ աշխատել են գրել գրաբար ձևով և կամ այդ բառերի բարդ լինելն իրենք այն ժամանակ չեն զգացել, թեև կա նաև* ձիթի ճանք:

5. 9-րդ տողի Արիարովնավշովաշոց *բառերը ընկել են ծայրերը փշրված քարի վերին եզրին, ուստի պարզ և փակագիր գրերի ծայրերը չեն երևում և այդ տեղանունները մեզ անծանոթ լինելու պատճառով չենք կարողացել վերծանել։*

6. Քարի չեչոտության և գրերի մաշվածության պատճառով լավ չենք կարողացել կարդալ նաև 11-րդ տողում Ագրակին, Վաճկինա, Բորդք *տեղանունները։*

Ժամանակը որոշել ենք Բարսեղի առաջնորդության տարիներով։ Որ Բարսեղն ինքն է եղել վանքի առաջնորդ, դրանում չի կարելի կասկածել, որովհետև այլ առաջնորդի անուն չի հանդես գալիս նվերներն ընդունելու և նվիրատուի համար օրեր հատկացնելու համար։

Տարընթերցում.— *1.* Ջալ *և* Գրիմ *4-րդ տողում* զՏաւաւերու *կարդացել է՝* Տալաւէրու:

2. Արիարովնավշուվաշաց Ջալ *կարդացել է՝* սարիարովն. Վաշուվաշաց:

3. Ջալ *11-րդ տողում* Վաճկինու ձորն *կարդացել է՝* Վճակնի ձորն:

4. 11-րդ տողում բորդք ջաղ(ա)ցն Ջալ *կարդացել է* Բերդկայ ջաղացն:

63. Մեծ վանքի կենտրոնական նավի ծայրին դրսից, խոյակի ճակատին

(Լուս. № 51)

Հ ՉԽ Մ 1291

Հրատարակվում է առաջին անգամ

Էլդան ՉԽ թւակն. Թար

Ծանոթություն.— *Հավանաբար այս արձանագրությունը գրված է իբրև նախաբան հաջորդի համար թվականն ու Էլդանի իշխանությունը ցույց տալու նպատակով, մանավանդ որ հաջորդ արձանագրության մեջ հիշատակվող Զնելանց Մելիքի մի ուրիշ արձանագրությունը (№ 116) նույնպես ՉԽ թվականին է պատկանում։*